# Արձանագրություն N 3

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից յուղերի և քսայուղերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՐՋԷԿ-ԳՀԱՊՁԲ 23/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի վերսկսման և բանակցությունների վարման

ք. Երևան 26.09.2017թ., ժ. 11:00-ին

Մասնակցում էին

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ա. Գևորգյանը |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Ս. Մուրադյանը |
| | Ս. Չիդեմյանը |
| | Բ. Հարությունյանը |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ա. Պետրոսյանը |

Նիստին մասնակցում էր «Պրեմիում մոթորս» ՍՊԸ-ի կողմից լիազորված անձ՝ Ա. Շահինյանը:

**<u>Նիստի օրակարգը.</u>**

1. Գնահատող հանձնաժողովի կասեցված նիստը վերսկսելու և բանակցություններ վարելու մասին:
2. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:
3. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ:
4. Գնման ընթացակարգի 5-րդ, 10-րդ և 11-րդ չափաբաժինները չկայացած հայտարարվելու մասին:
5. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը որոշելու մասին:

***<u>Հարց 1.</u>***

Հանձնաժողովը վերսկսում է կասեցված նիստը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մարտի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետի «գ», «դ» և «ե» պարբերությամբ՝ վարում է միաժամանակյա բանակցություններ 7-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների մասով համապատասխանաբար՝ Gadus S2 V100-2 տիպի քսայուղի, Gadus S2 V100-3 տիպի քսայուղի և Gadus S2 V220-2 տիպի քսայուղի համար ներկայացված գնային առաջարկների նվազեցման նպատակով:

Նիստին ներկա գտնվող «Պրեմիում մոթորս» ՍՊԸ-ի ներկայացուցչի հետ տեղի ունեցած բանակցության արդյունքում արձանագրվեց հետևյալը՝

| Հ/հ | Չափաբաժնի անվանումը | «Պրեմիում մոթորս» ՍՊԸ | |
|---|---|---|---|
| | | Գնման հայտով առաջարկած գինը | Բանակցության արդյունքում առաջարկվող գինը |
| 7. | Gadus S2 V100-2 | 198 000 | 150 000 |
| 8. | Gadus S2 V100-3 | 103 000 | 70 000 |
| 9. | Gadus S2 V220-2 | 190 000 | 150 000 |

***Հանձնաժողովը որոշեց՝***

«Պրեմիում մոթորս» ՍՊԸ-ի կողմից գնման ընթացակարգի 7-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների համար առաջարկված գին սահմանել համապատասխանաբար՝ 150 000 ՀՀ դրամ, 70 000 ՀՀ դրամ և 150 000 ՀՀ դրամ:

**Կողմ՝ 4, դեմ 0:**

***<u>Հարց 2.</u>***

Հանձնաժողովը, ուսումնասիրելով մասնակիցների ներկայացրած հայտերը, որոշեց.

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 35-րդ կետի 12-րդ ենթակետով՝ «Արման-Օիլ Մեկ» և «Տուրբոլայն» ՍՊ ընկերությունների հայտերը մերժել՝ հրավերով սահմանված պայմաններին ոչ համապատասխան կազմված լինելու հիմքով (ներկայացված էլեկտրոնային հայտերում ներառված փաստաթղթերի վրա տեսանելի չեն էլեկտրոնային թվային ստորագրությունները):

2.2 «Հույս-Մոտոր», «Պրեմիում մոթորս», «Էյ-Ի-Ջի-Սերվիս», «ԷՔՍՊՈՐՏ ՕՅԼ», «Մոսէսքո» և «ԺԱԿ ԵՎ ԳՈՌ» ՍՊ ընկերությունների հայտերը բավարարել՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու հիմքով:

**Կողմ՝ 4, դեմ 0:**

***<u>Հարց 3.</u>***

Հանձնաժողովը, հիմք ընդունելով մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները, որոշեց ըստ չափաբաժինների առաջին և հաջորդաբար տեղերը բաշխել հետևյալ կերպ.

***1. Չափաբաժին 1*** *ՀՀ դրամ*

| Հ/հ | Զբաղեցրած տեղ | Կազմակերպության անվանում | Կազմակերպության առաջարկած գինը՝ առանց ԱԱՀ |
|---|---|---|---|
| 1 | 1-ին | «Պրեմիում Մոթորս» ՍՊԸ | 19 115 200 |
| 2 | 2-րդ | «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ | 20 492 000 |

***2. Չափաբաժին 2***

| Հ/հ | Զբաղեցրած տեղ | Կազմակերպության անվանում | Կազմակերպության առաջարկած գինը՝ առանց ԱԱՀ |
|---|---|---|---|
| 1 | 1-ին | «ԺԱԿ ԵՎ ԳՈՌ» ՍՊԸ | 78 333,0 |
| 2 | 2-րդ | «Մոսէսքո» ՍՊԸ | 78 333,33 |

| | | | |
|---|---|---|---|
| 3 | 3-րդ | «ԷՔՍՊՈՐՏ ՕՅԼ» ՍՊԸ | 91 400 |
| 4 | 4-րդ | «Պրեմիում Մոթորս» ՍՊԸ | 91 666,7 |

### 3. Չափաբաժին 3

| Հ/հ | Զբաղեցրած տեղ | Կազմակերպության անվանում | Կազմակերպության առաջարկած գինը՝ առանց ԱԱՀ |
|---|---|---|---|
| 1 | 1-ին | «ԺԱԿ ԵՎ ԳՈՌ» ՍՊԸ | 818 583 |
| 2 | 2-րդ | «Մոսէսքո» ՍՊԸ | 822 066,67 |
| 3 | 3-րդ | «Պրեմիում Մոթորս» ՍՊԸ | 870 833,3 |
| 4 | 4-րդ | «ԷՔՍՊՈՐՏ ՕՅԼ» ՍՊԸ | 886 160 |

### 4. Չափաբաժին 4

| Հ/հ | Զբաղեցրած տեղ | Կազմակերպության անվանում | Կազմակերպության առաջարկած գինը՝ առանց ԱԱՀ |
|---|---|---|---|
| 1 | 1-ին | «Մոսէսքո» ՍՊԸ | 364 008,3 |

### 5. Չափաբաժին 6

| Հ/հ | Զբաղեցրած տեղ | Կազմակերպության անվանում | Կազմակերպության առաջարկած գինը՝ առանց ԱԱՀ |
|---|---|---|---|
| 1 | 1-ին | «Հույս-Մոտոր» ՍՊԸ | 43 300 |
| 2 | 2-րդ | «Մոսէսքո» ՍՊԸ | 58 666,67 |
| 3 | 3-րդ | «Պրեմիում Մոթորս» ՍՊԸ | 70 000 |

### 6. Չափաբաժին 7

| Հ/հ | Զբաղեցրած տեղ | Կազմակերպության անվանում | Կազմակերպության առաջարկած գինը՝ առանց ԱԱՀ |
|---|---|---|---|
| 1 | 1-ին | «Պրեմիում Մոթորս» ՍՊԸ | 150 000 |

### 7. Չափաբաժին 8

| Հ/հ | Զբաղեցրած տեղ | Կազմակերպության անվանում | Կազմակերպության առաջարկած գինը՝ առանց ԱԱՀ |
|---|---|---|---|
| 1 | 1-ին | «Պրեմիում Մոթորս» ՍՊԸ | 70 000 |

### 8. Չափաբաժին 9

| Հ/հ | Զբաղեցրած տեղ | Կազմակերպության անվանում | Կազմակերպության առաջարկած գինը՝ առանց ԱԱՀ |
|---|---|---|---|
| 1 | 1-ին | «Պրեմիում Մոթորս» ՍՊԸ | 150 000 |

### 9. Չափաբաժին 12

| Հ/հ | Զբաղեցրած տեղ | Կազմակերպության անվանում | Կազմակերպության առաջարկած գինը՝ առանց ԱԱՀ |
|---|---|---|---|
| 1 | 1-ին | «Մոսէսքո» ՍՊԸ | 460 833,33 |

**Կողմ՝ 4, դեմ 0:**

*Հարց 4.*

Հանձնաժողովը.

4.1 ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1) ենթակետով և հիմք ընդունելով սույն արձանագրության 2.1 կետը՝ որոշեց գնման ընթացակարգի 5-րդ և 11-րդ չափաբաժինները հայտարարվել չկայացած,

4.2 ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3) ենթակետով՝ որոշեց գնման ընթացակարգի 10-րդ չափաբաժինը հայտարարվել չկայացած:

**Կողմ՝ 4, դեմ 0:**

*Հարց 5.*

Հաշվի առնելով վերոգրյալը, հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել սույն թվականի հոկտեմբերի 6-ին, ժամը 11:00-ին, ք. Երևան, Արին Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեում գտնվող վարչական շենքում:

**Կողմ՝ 4, դեմ 0:**

*Հանձնաժողովը հանձնարարեց քարտուղար Ա. Պետրոսյանին՝*

- Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել ըստ չափաբաժինների առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցների հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:
- Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել ըստ չափաբաժինների առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

ԾԱՆՈՒՑՈՒՄ – *Սույն արձանագրության հետ միաժամանակ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկվում է արձանագրությունն ստանալուց երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:*

Հանձնաժողովի
Նախագահ Ա. Գևորգյան

Անդամներ՝ Ս. Մուրադյան

Ս. Չիդեմյան

Բ. Հարությունյան

Քարտուղար՝ Ա. Պետրոսյան